պատուելի Սմբատ մեր իշխան պաշտօնի նախա-
բարութեան, և յիշեսցես 'ի վերայ աշխարհին
հայաստանեաց և 'ի վերայ բնութեան մարդոյ
'ի պատճառէ գործոց ձեռաց իւրաքանչիւր գոր-
ծոց ըստ Օրինօքն հայաստանեաց և հրամանաւն
տանէն Հայոց։

Տուաք իշխանութիւն քեզ զի լինիցիս դու
Տէր ամենայն Հայոց ըստ նմանութեան բանին
Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի, որ պահելով
դու քեզ պատրաստ ծառայելոյ ամենայն հայոց
և Ջատագով ընդ դէմ թշնամեաց և հակառակոր-
դաց Օրինաց և ազգին Հայոց, ունես իշխանու-
թիւն գործելոյ զամենայն գործ բարիս, այլ ընդ
դէմ Օրինացն հայոց գործ ոչ մի, և թոյլատու-
ութեամբ քոյ այլոց գործելոյ ոչ մի և ներումն
այլոց ընդդէմ Օրինաց գործողաց ոչ մի, եղաք
լուծ օրինացն հայոց 'ի պարանոցս քոյ զի քաղցր
է, և ընթանալն ըստ Օրինօք թեթև, այլ երկայ-
նամիտ լեր և պահեայ 'ի խոր կրծից սրտի քոյ
ամենայն հատոր Օրէնս հայոց, քանզի կեանս
քոյ և պատիւ կենաց քոց 'ի յօրէնս հայոց կա-
խեալ կայ, մի 'ի փոքեր հատոր Օրինաց հայոց,
'ի պատճառէ քումմէ խորտակմանէ փշրեսցի ոս-
կերս անդամոց քոց։

Տուաք իշխանութիւն քեզ Շահեցուցանել
ամենայն ժողովրդոց հայոց և ոչ վնասիլ ոչ ու-
մեք, յիշեալ 'ի վերայ գործոց ձեռաց ամենեցուն